ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6, Հեռ. (0222) 57070 ,
ptghni.kotayq@mta.gov.am

N 247
10 հուլիս 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների, Ձեզ է ուղարկվում Պտղնի համայնքի ղեկավարի 2020 թվականի N 44-58 որոշումները:
Առդիր 16 ֆայլ:

10-Jul-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 44

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջների, հիմք ընդունելով «ՎԻԼԼԱ ՀԻԼԼՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՎԻԼԼԱ ՀԻԼԼՍ» ՍՊԸ-ին տալ Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 1 թաղամաս թիվ 35 հասցեում գտնվող «ՎԻԼԼԱ ՀԻԼԼՍ» հանդիսությունների սրահում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի և հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2020 թվականի հունիս ամսվա և 3-րդ եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

04-Jun-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. հունիսի 04
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 45

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Մարգարիտա Վրույրի Սարգսյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց 1-ին փակուղի թիվ 7 (կադաստրային ծածկագիր 07-054-0033-0019, սեփականության վկայական N 29052019-07-0061) հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան, ավտոտնակի, լողավազանի, տաղավարի, խորոված-ծանոցի և պարիսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Մարգարիտա Վրույրի Սարգսյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

05-Jun-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. հունիսի 05
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 46

ԳԵՎՈՐԳ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ 0.022 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Գևորգ Մարտիկի Սարգսյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Գևորգ Մարտիկի Սարգսյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Պտղնի գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0.1036 հա վարելահողի վրա (սեփականության վկայական N 27042020-07-0003, ծածկագիր 07-054-0323-0011) անասնապահական տնտեսության՝ անասնաշենքի, վարչական շենքի և տարածքի պարիսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. 07-054-0323-0011 կադաստրային համարի հողակտորից 220,0 քմ հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության հողերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի՝ համաձայն կից ներկայացված հատակագծի:
3. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
4. Գևորգ Մարտիկի Սարգսյանին պատկանող 07-054-0323-0011 ծածկագրով 0.022 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 21-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 9:
5. Հանձնարարել Գևորգ Մարտիկի Սարգսյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
6. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
7. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք ձև N 5-ը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

11-Jun-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. հունիսի 11
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 47

ՍՈՆՅԱ ՌՈՍՏՈՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Սոնյա Հարությունի Ռոստոմյանի դիմումը և որակավորված անձի կողմից գծված հողամասի բաժանման սխեման՝ ***որոշում եմ.***

1. Սոնյա Հարությունի Ռոստոմյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 4-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 6 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-054-0007-0026, սեփականության վկայական N 2709378) անշարժ գույքի բաժանումից առաջացած՝

1) S1 բաժանվող մաս - 0.0730 հա մակերեսով բնակելի տանը և բնակավայրերի նշանակության հողամասին տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ գ. Պտղնի 4-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 6,

2) S2 բաժանվող մաս - 0.07302 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասին տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ գ. Պտղնի 4-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 6/1, համաձայն բաժանման սխեմայի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

11-Jun-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. հունիսի 11
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 48

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված և երկկողմանի ստորագրված արձանագրությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արթին Սիրոժի Դերքեշիշյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում ինքնակամ կառուցել է շինություն՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Պտղնի համայնքում գտնվող Արթին Սիրոժի Դերքեշիշյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0331-0061 կադաստրային ծածկագրով հողամասի վրա ինքնակամ շինություն կառուցելու համար ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի տեսքով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Արթին Սիրոժի Դերքեշիշյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

11-Jun-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. հունիսի 11
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 49

ՎԻՈԼԵՏԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով Վիոլետա Յուրիի Գաբրիելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Վիոլետա Յուրիի Գաբրիելյանին իրեն սեփականության իրավունքով պատկանող 07-054-0315-0177 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի վրա կատարել հողային և բարեկարգման, մասնավորապես հողահարթեցման և քարհավաքման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

19-Jun-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. հունիսի 19
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 50

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 30-րդ մասի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 13-ի ««Հողաչափ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Պտղնի համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեման հաստատելու մասին» N 5 և 2020 թվականի հունիսի 10-ի N 25 որոշումները՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր 07-054-0332-0020) 1.443 հա ջրային հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման, համաձայն համայնքի գոտիավորման և օգտագործման սխեմայի:
2. Նշված փոփոխությունը ներառել համայնքի հողերի ընթացիկ տարվա հաշվեկշռում:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող 1.443 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 23-րդ փողոց թիվ 12:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

24-Jun-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. հունիսի 24
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 51

ՍԱՇԱ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ 0.022 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Սաշա Աշոտի Աղաջանյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Սաշա Աշոտի Աղաջանյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Պտղնի գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0.15 հա վարելահողի վրա (սեփականության վկայական N 25102019-07-0009, ծածկագիր 07-054-0323-0010) անասնապահական տնտեսության՝ անասնաշենքի, վարչական շենքի և տարածքի պարիսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. 07-054-0323-0010 կադաստրային համարի հողակտորից 220,0 քմ հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության հողերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի՝ համաձայն կից ներկայացված հատակագծի:
3. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
4. Սաշա Աշոտի Աղաջանյանին պատկանող 07-054-0323-0010 ծածկագրով 0.022 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 21-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 7:
5. Հանձնարարել Սաշա Աշոտի Աղաջանյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
6. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
7. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք ձև N 5-ը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

24-Jun-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. հունիսի 24
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 52

ԱՄՈՒՐ ԱՎԱԿՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ 0.1 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Ամուր Ավակյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Ամուր Ավակյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Պտղնի գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 2.97184 հա արոտավայրի վրա (սեփականության վկայական N 13052020-07-0108, ծածկագիր 07-054-0308-0091) անասնապահական տնտեսության և պարիսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. 07-054-0308-0091 կադաստրային համարի հողակտորից 1000,0 քմ հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության հողերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի:
3. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
4. Ամուր Ավակյանին պատկանող 07-054-0308-0091 ծածկագրով 0.1 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 15-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 12:
5. Հանձնարարել Ամուր Ավակյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
6. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
7. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք ձև N 5-ը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

24-Jun-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. հունիսի 24
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 53

ԱՁ ՍՈՒՍԱՆ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջների, հիմք ընդունելով ԱՁ Սուսան Մելքոնյանի կողմից ներկայացված հայտը՝ ***որոշում եմ.***

1. ԱՁ Սուսան Մելքոնյանին տալ Կոտայքի մարզ գ. Պտղնի 21-րդ փողոց թիվ 22 հասցեում գտնվող թոնրատանը ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի և հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2020 թվականի 3-րդ եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

30-Jun-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. ՀՈՒՆԻՍԻ 30
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 54

ՎԱՀԵ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ 0.025 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Վահե Բաղդասարի Մուրադյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Վահե Բաղդասարի Մուրադյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Պտղնի գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0.2058 հա վարելահողի վրա (սեփականության վկայական N 04062020-07-0050, ծածկագիր 07-054-0301-0006) անասնապահական տնտեսության՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակման (չրանոցի) շինության կառուցման և տարածքի պարսպապատման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. 07-054-0301-0006 կադաստրային համարի հողակտորից 250,0 քմ հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության հողերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի՝ համաձայն կից ներկայացված հատակագծի:
3. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
4. Վահե Բաղդասարի Մուրադյանին պատկանող 07-054-0301-0006 ծածկագրով 0.025 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 15-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 13:
5. Հանձնարարել Վահե Բաղդասարի Մուրադյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

6. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
7. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք ձև N 5-ը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

02-Jul-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. հուլիսի 02
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 55

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ 500.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 25.0 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Անահիտ Մկրտչի Իսրայելյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել ժառանգության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 2-րդ թաղամաս թիվ 96 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0203-0049) 1994 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տունը և ժառանգության իրավունքով իրեն պատկանող 500.0 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 25.0 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինության և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Անահիտ Մկրտչի Իսրայելյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 2-րդ թաղամաս թիվ 96 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1994 թվականին ինքնակամ կառուցվել է 130.8 քմ մակերեսով բնակելի տուն և ժառանգության իրավունքով իրեն պատկանող 500.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 25.0 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինության և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անահիտ Մկրտչի Իսրայելյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 2-րդ թաղամաս թիվ 96 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չի

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 25.0 քմ տարածքը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Անահիտ Մկրտչի Իսրայելյանին ժառանգության իրավունքով պատկանող 1994 թվականին կառուցված 130.8 քմ մակերեսով բնակելի տունը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Քաղաքացի Անահիտ Մկրտչի Իսրայելյանին ժառանգության իրավունքով պատկանող 500.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 25.0 քմ մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

02-Jul-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. հուլիսի 02
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 56

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 10-ի N 24 որոշումը, կից սեփականատերերի փաստացի օգտագործությունը և դիմումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասերը հնարավոր չէ օտարել որպես առանձին միավոր աճուրդային կարգով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգեզանգված 5-րդ թաղամաս թիվ 2 հասցեում գտնվող 0.004447 հա (սեփականության վկայական N 08052020-07-0085, ծածկագիր 07-054-0203-0091) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարել կից հողամասի (կադաստրային ծածկագիր 07-054-0203-0070) սեփականատեր Մարինե Ռազմիկի Մաիլյանին(անձնագիր BA0622515, տրված 04.06.2014թ.) 250 000 ՀՀ դրամով:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2/2 հասցեում գտնվող 0.0098 հա (սեփականության վկայական N 14052020-07-0032, ծածկագիր 07-054-0036-0027) բնակավայրերի նշանակության այլ հողատեսքը ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարել կից հողամասի (կադաստրային ծածկագիր 07-054-0036-0001) սեփականատեր Սիլվերիա Պադիլլային (Հաշվառված ՀՀ ք. Երևան Նորք 1 նրբանցք տուն 4 հասցեում, Հայաստանի Հանրապետության կացության քարտ AH0000665, տրված 29.05.2019թ.) 445 000 ՀՀ դրամով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

07-Jul-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. հուլիսի 07
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 57

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՐԹԵՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱԼՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ին համայնքային սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր 07-054-0332-0020) 1.443 հա հողամասում կատարել հարթեցման և հողալցման աշխատանքներ:
2. «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի հետ կնքել համայնքային սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր 07-054-0332-0020) 1.443 հա հողամասում հողային աշխատանքների անհատույց կատարման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

09-Jul-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. հուլիսի 09
գ.Պտղնի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԿԱՏԱՐՄԱՆ

գ. Պտղնի «09» Հուլիսի 2020 թ.

Պտղնիի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Առաքել Հակոբի Վիրաբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից և «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս գործադիր տնօրեն Էդուարդ Հայրապետի Մարգարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել հարթեցման և հողալցման աշխատանքներ, մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները:
1.2. Կատարողը պարտավորվում է կատարել հետևյալ ծառայությունները՝ Պտղնի համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման (կադաստրային ծածկագիր 07-054-0332-0020) 1.443 հա հողամասում հարթեցման և հողալցման աշխատանքներ, այսուհետ՝ «Ծառայություններ»:
1.3. Աշխատանքների կատարման ժամկետը սահմանել մինչև տարածքի հողալցման ավարտը: Կատարողն իրավունք ունի աշխատանքներն ավարտել ժամկետից շուտ:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝
2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.
2.1.2.Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, առանց շինաղբի, հողը տեղափոխող բեռնատարները փակված վիճակում, սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում.
2.1.3. Ծառայությունները կատարել անձամբ:
2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝
2.2.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

3. Պայմանագրի գինը՝

3.1. Պայմանագիրը կնքվում և կատարվում է անհատույց հիմունքներով:

4. Վեճերի լուծման կարգը

4.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը ենթակա են լուծման գործող օրենսդրությամբ սահմանված և դատական կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1 Սույն պայմանագրում կատարված ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ կողմերի կողմից:
5.2 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական օրինակ կողմերից յուրաքանչյուրի մոտ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
Պտղնիի համայնքապետարան	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
ՀՎՀՀ 03503883	ՀՎՀՀ 02569362
Հասցեն. Կոտայքի մարզ գ. Պտղնի 1 փողոց թիվ 6	Հասցեն. ՀՀ ք. Երևան Շենգավիթ, Շիրակի փ. 74/16 արտադրամաս
Բանկը՝ ՀՀ կենտրոնական գանձապետարան	Բանկը՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900102275063	Հ/Հ 11500928197900
Պտղնի համայնքի ղեկավար Ա. Վիրաբյան	Գործադիր տնօրեն Է. Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 58

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ 500.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 100.0 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ազատ Էդուարդի Աղայանի լիազորված անձ Դավիթ Ազատի Աղայանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել Ազատ Էդուարդի Աղայանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 81 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0222-0081) 1999 թվականին ինքնակամ կառուցված այգետնակը, մառանը, զուգարանը, պարիսպը և սեփականության իրավունքով Ազատ Էդուարդի Աղայանին պատկանող 500.0 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 100.0 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Ազատ Էդուարդի Աղայանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 81 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1999 թվականին ինքնակամ կառուցվել է 43.16 քմ մակերեսով այգետնակ, 4.53 քմ մակերեսով մառան, 1.95 քմ մակերեսով զուգարան, 4.56 քմ մակերեսով պարիսպ և սեփականության իրավունքով իրեն պատկանող 500.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 100.0 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազատ Էդուարդի Աղայանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին

այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 81 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 100.0 քմ տարածքը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի քաղաքացի Ազատ Էդուարդի Աղայանին սեփականության իրավունքով պատկանող 1999 թվականին կառուցված 43.16 քմ մակերեսով այգետնակը, 4.53 քմ մակերեսով մառանը, 1.95 քմ մակերեսով զուգարանը և 4.56 քմ մակերեսով պարիսպ համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Քաղաքացի Ազատ Էդուարդի Աղայանին սեփականության իրավունքով պատկանող 500.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 100.0 քմ մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

09-Jul-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. հուլիսի 09
գ.Պտղնի